

մանր մասսա: Կրեմր շուտ սառեցնելու համար մեջը կաթեցնում են մի քանի կաթիլ քացախ, կամ կիտրոնի հյութ:

**Ռշտու-հալվա:** Վերցնում են 4 ձու, 200 գրամ շաքար, 250 գրամ մեղր և ալյուր այնքան, որքան կպահանջվի փափուկ խմոր սառնալու համար: Նախ՝ ձուն հարում են և շաղախում ալյուրի հետ, ապա հունցում, մինչև սաացվի փափուկ խմոր:

Խմորը բաժանում են երեք մասի, օխլավով բացում, անում բարակ լավաշներ, ոլորում գլանաձև և ոչտա կտրատում: Ռշտան յուղով բովում են կաթսայի մեջ, այնքան, որ կարմրի, խմորը կոշտանա: Մեղրը և շաքարը, շարունակ խառնելով, առանձին կաթսայի մեջ եռացնում են, երբ մեղրը սկսում է թանձրանալ, գղալի ծայրով վերցնում են և պտուղ սառը ջրի մեջ: Եթե մեղրն իսկույն սառչում է ու ապակու ձև ստանում, ուրեմն արդեն պատրաստ է: Ռշտան իսկույն և եթ պտուղ են մեղրի մեջ և հացի զգալով խառնում: Մաքուր ապխտակի երեսը թացացնում են ջրով, կաթսայից հանում ոչտան և փռում տախաակի վրա, թաց ձեռքով ձև տալիս նրան: Մի փոքր սառելուց հետո, այն տեղավորում են ափսեի մեջ,

կտրատում ումբաձև և վրան ցանում շաքարի փոշի:

**Թուրքուրու:** Պատրաստում են խաղողի հյութից և ալյուրից (ավելի լավ է սև): Հյութի և ալյուրի խառնուրդը եփում են, մինչև շփոթի (կիսել) պես թանձրանալու: Հետո շփոթը բարակ շերտերով լրցնում են երկար տախաակների վրա և մի քանի օր գնում արևի տակ շորանալու: Զորացնելուց հետո, թաթարուն փաթաթում են շորի մեջ և պահում շոր տեղում ձմեռվա համար:

**Դոշաբ:** Վերցնում են մեկ դույլ շիրա և մեկ բաժակ մաքուր սպիտակ կավիճ կամ «ժալամի» (վազի ոստերից ստացված) մոխիր: Շիրան և կավիճը (կամ մոխիրը) խառնում են իրար, թողնում մի գիշեր, որ հեղուկը պարզվի: Մյուս օրը պարզված շիրան լցնում են կաթսայի մեջ և եփում այնքան, մինչև որ հեղուկը կարմրի և թանձրանա: Երբ նա հասնում է մեղրի թանձրության և կպուրնուլյան, կաթսան հանում են կրակի վրայից, սառեցնում և ապա պարունակությունը լցնում ապակե ամանի մեջ, բերանը շորով փաթաթում և գնում սառը տեղ:

Դոշաբը շինում են սպիտակ կամ ալ խաղողից, իսկ թաթարուն՝ սև խաղողից:

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարսանեկան ամենատարածված կրգերից էր հետևյալը.

Դև, քեփ արա, հարսի ջան, հա, հա, հա,  
էսօր ալլու ա կոշան, հա, հա, հա,  
Մամոն իլի քեզ քավոր, հա, հա, հա,  
Ամենքս՝ հարսանքավոր, հա, հա, հա:

էս իրիգուն անպաաճառ. հա, հա, հա,  
Պետք ա մորթենք մե ոչխար, հա, հա, հա,  
Աաջում անենք դուրմա, հա, հա, հա,  
Սխտոր, մաժուն անխնա, հա, հա, հա:

Երգում էին նաև

«Աղջիկ բախտավոր», «Ջան գյուլում», «Մեր բաղումը կանաչի», «Դու շես հավատում», «Թև ուղում ես թամաշա», «Միժևոնակ», «Կոռնկ»,

«Շուշիկ, Շուշիկ», «Որքան ուղեցի», «Լարի թրմբըլահա, հա, հա, հա» և այլն:

Դարիս սկզբին Ղլարի հարսանեկան երգերի ցանկում ավելացան նոր խմբերգեր և մեներգեր «Անուշից», «Պըլը-Պուղուց», «Արջին Մալալայից», «Աջուղ Ղարիբից» և այլն:

Հարսանիքի հաջորդ առավոտ րոլորը խմորովին երգում էին ներսես Շնորհալու «Առավոտ լուսո» հայտնի մեղեգին:

Հարսանիքին պարում էին հայկական «նաղպար», «ուզունդարա», «լեպո-լե, լե», «յալլուղս կորավ» և Ղլարի «տղավորներ» (լեղգինկաներ), «խանչալներով աղավոր»: Վարպետորեն պարում էին նաև գինու շիշը գլխին դրած պարը, ծամածրոություններով պարը և այլն:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Վախից հիվանդացած մարդու համար Ղլարում ասում էին՝ «առվահ ա ինդկ»: Հիվանդին բժշկում էին «վախը թափելով»:

Դիվական հիվանդանքի (լուսնոտ, խելագարություն, տպուղություն) նկատմամբ կար բժշկություն մի միջոց, որ կոչվում էր «կիր պաց»

անկախ՝ թղթի վրա գրում էին ինչ-որ այլանդակ նշաններ ու բառեր, որը կոչվում էր «թալիսման»։ Թալիսմանը տալիս էին հիվանդին, որի մի մասը նա պիտի ջրով խմեր կամ ծխեր, մնացածն էլ կարևոր շոգի մեջ և վզից կախեր։

Չար աչքից ռոնվածին բուժում էին ղանազան աղսթրներով ու կախարդանքներով։ Աղոթքը կատարում էր այդ դործին «հմուտ» պառավը։ Նա սեակոթ դանակով կամ շաքարի կտորով (շարունակ հորտնելով) խաչակնքում էր հիվանդի երեսը. երես սնդամ «հայր մեր» էր արտասանում և բույում անկամ «չար աչքը տոաքի» բառերը։ Եթե հիվանդն էլ պառավի հետ միասին սկսում էր հորանջել և աչքերից առատ արցունք էր վաղում, դա նշանակում էր, որ աչք սովողը կին է, և հիվանդը շուտով կստողջանա։

#### ԱՂՈԹՔ ՉԱՐ ԱՉՔԻՑ ԲՈՒՎԱԾԻ ՀԱՄԱՐ.

1. Աղոթեմ ութը մատով,  
Աստվածամոր քաղցր կաթով,

Պապիս բժշկարանով,  
Սե օձը կթան,  
Առանց մերանի մերան,  
Մերը կերավ, կես իլավ,  
Աղջիկը կերավ ու փքվավ,  
Առ սեակոթ դանակը,  
Մտի Աղամր գրախտը,  
Իմ թանկագին (անունը),  
Կտրի հտնի շար աչքը,  
Չար փուշն ու նախանձը։

2. Աստվածամեր կույսն ես,  
Մեղավորայ հույսն ես,  
Հիվանդի համար բարեխոսի  
Ի սեր տյառն Քրիստոսի,  
Չարը խափանի, բարին աղողի,  
Մեր քուրք Տիրամեր,  
Ամեն,

### ՂՂԱՐԻ ՀԱՅԵՐԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Թատերական սիրողական խումրը Ղղարում դսուծյուն է ունեցել մոաավորապես XIX դ. 60-ական թվականներից, երր Ղղարում ապրում և դործում էին այնպիսի ականավոր հասարակական գործիչներ, ինչպիսիք էին բժշկասկես Ռոմանոս Միշվելյանը, բժիշկներ Անանիա Սուլթանշահը, Վ. Սամբուլյանը, բանասանդծ Հովհ. Քուլուբեկյանը, Գևորգ քահանա Մկրտումյանը, քաղուքազուրի Գասպար Մամաշանովը, վանքի եկեղեցու երեցվորի Ոսկան Քալանթարյանը, քաղաքային գումայի անդամ Հ. Մեհրաբյանը, բժիշկ Մարաիրոս Դուրյանը, նրա կինը՝ տիկին Շուշանը և գուստրը՝ օրիորդ Աշխենը, Իղմիրյանները, Գալլստյանները, հայ բարեգործական ընկերությունն նախագահ Գասպար Աղաբալյանը և ուրիշներ։

1880-ական թվականներին Ղղարի թատերական սիրողական խմբի ղլխավոր գործիչներն էին Վարդան Մանուկյանը, Գևորգ Ավենիկյանը, Սուլթանյանը, Անդրեաս Ֆիլիյանը, Գևորգ քահանա Մկրտումյանը, վերջինս խմբի ռեժիսորն ու հուշարարն էր, նրա կինը՝ Սոֆին (Ասլամաղյան)։ Սիրողական խմբում սկզբում կանացի դերակատարներ չկային, նրանց դերը կատարում էին տղամարդիկ։ Սակայն ժամանակի ընթացքում այդ դժվարությունն էլ հաղթահարվեց։ XX դ. առաջին

աասնամյակում։ Ղղարն արդեն ուներ փորձված թատերական խումր։ Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, Ղղարի հայկական թատերական խումրը նոր եռանդով ու խանդավառությամբ սկսեց աշխատել իր հայրենի քաղաքում և կարճ ժամանակում հասավ խոշոր հաջողությունների։

1920 թ. սիրողների այդ խմբում առաջ են քաշվում երիասարդ, նոր ընդունակ ուժեր։ Փոխվում է խաղացանկը։ Բեմադրվում են ոչ միայն դրամաներ ու կոմեդիաներ, այլև օպերաներ՝ հայկական և ռուսական։ Սիրողների թատերական խումրը դարձավ հայոց լեղվի ամրապնդման յուրօրինակ դպրոց։ Այստեղ երիտասարդները կարճ ժամանակում հասան այնպիսի հաջողությունների, որ խմբի ղեկավարությունը վրատահորեն նրանց հանձնարարում էր պատասխանատու դերեր։ Օրինակ՝ Գևորգ Հակոբյանը, որ մինչև խումր մանելը հայերենից դրեթե անգրագետ էր, մեկ աաըում սովորեց հայերեն գրել և կարդալ, հաջողությամբ կատարել ղանազան դերեր։ Նույնը կարելի է սսել երգչուհի Հովսեփյանի և շատ ուրիշների մասին։

Բեժիսոր չեն ունեցել, ընմական արվեստ և շատ րաներ նրանք սովորել են հայ հայտնի դերա-